

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

12. ՀԱՅ ՉԵԼԵՐԻՆԵՐԸ

Խոջաներեն զատ, Պոլսո մեջ հայ երեւելիներու ուրիշ խումբ մըն ալ կաւ, որ ծանոթ էր չելերի անունով, մարդիկ, որոնք դիրք ունեին պետութեան մոտ, և առավել չափով հայ կյանքին մեջ, պետութեան մոտ իրենց վայելած ճիշտ այդ դիրքին շնորհիւ:

Թուրքերեն բառ է չելերի, և ծագած ըլլալ կկարծվի չելեր բառեն, որ հին թուրքերենի մեջ աստված կնշանակեր: Պատվո տիտղոս մըն էր ան ի սկզբան: Զայն կրեց, օրինակ, օսմանյան սուլթան Մահմուդ Ա-ը (1413—1421), և իրմ հետո շատեր օսմանյան կայսրութեան մեջ դեր կատարած դեմքերեն, և առաջին հերթին մտավորական դասուն կարկառուն ներկայացուցիչները: Այսպես, չելերի տիտղոսը կկրեն ժէ դարու թուրք համբավաւոր ուղեգիր էվլիան և նուազարու հայտնի պատմագիր Քյաթիր Չելերին: Նույն տիտղոսը ունեին նաև ժՁ դառու տասնյակ մը թուրք բանաստեղծներ, ինչպես Ահմեդ Չելերի, Փարսիարաղաղե Ահմեդ Չելերի, Իսհաք Չելերի, էմրի Չելերի, Զաֆեր Չելերի, Մուալլիմ Չելերի, Մուստաֆա Չելերի, Աբդուլազիզ

Չելերի, Սալիհ Չելերի, Շահ Չելերի⁴⁰², ինչպես բազմաթիւ թուրք բանաստեղծներ և մտավորականներ հաջորդ դարերեն ևս:

Չելերին եթէ իբրև պատվւ տիտղոս չհասավ մեր օրերուն, անցյալ դարուն ան դեռ ի գործածութեան էր սակայն իբրև փաղաքշիշ ածական: Մանուկ բն Միրզայանց 1816 հունվար 25-ին Քիշնենն Բրաշով, իր բնտանիքին ուղղած մեկ նամակին մեջ կհանձնարարի իր բարեները տալ «չէլէպի օղուլլարմ Կարապետէ, Մուրատայ» («չելերի զավակներու» Կարապետին, Մուրադին)⁴⁰³:

Արդ, չելերիներու ամբողջ դաս մը ուներ իր ծոցին մեջ ժէ դարուն արևմտահայութեանը, Պոլսո թե գաւառներու մեջ: Ասոնք, գրեթե բոլորն ալ, ծանոթ էին իրենց ունեցած կապերով թուրք իշխանավորներուն հետ, ոմանք իբրև հայթայթիչ պետութեան, ուրիշներ իբրև սեղանավոր մեծ եպարքոսին և ուրիշ պետական երեւելիներու: Եվ իրենց վայելած սույն դիրքին կպարտեին նաև իրենց հեղինակութեանը ազգային գործերու մեջ:

Տասնյոթներորդ դարու հաւ չելերիներուն մեջ անվանի էր Աբրահամ Չելերին, ծանոթ նաև Աբրո Չելերի անունով: «Աբրոյանդ տոհմին սկզբնավորութեան պատմիչն եղած

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 8-ից, ԺԲ-ից, 1963 թվականի № 8 Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից և Է-Ը-ից:

⁴⁰² Fehmi Edhem Karatay, „Tophane sarayı müzesi kütüphanesi türkce yarmalar Katalogu“, I, İstanbul, 1961, s. 382—385.

⁴⁰³ Բուխարեստի պատմութեան Թանգարան, Մանուկ բնի ֆոնդ, վավերագիր թիւ 35 126ր:

է,— կգրե Զ. Ն. Ակինյան,— երեմիա Չելեբի, որ իբրեւ դաստիարակ Աբրահամ Չելեբիի որդիներուն՝ մուտ գտած ըլլալով Աբրոյանց տունը, զրի առած է ինչ որ պատմված է հոն ավանդաբար տոհմին հին անդամներու մասին: Տոհմիս պատմութեան նվիրված է հանվանէ Վիպասանութիւն յԱպրօ Չէլէպի: Բայց երեմիա Աբրոյանց մասին հաճախ խոսք բրած է նաեւ յուր մյուս գրվածքներու մեջ»⁴⁰⁴, Աբրոյանց ազգաբանութեան մասին հետազային խոսած են նաեւ Զ. Համազասպ Ոսկյան, Արշակ Ալպոյաճյան, Զ. Քուրդյան և ուրիշներ: Ինչ որ երևան կուգա Աբրոյանց տոհմին մասին գրվածքներին, անոնք կսերին ժՁ դարու կեսերուն Կարինէն Բելգրադ գաղթած ընտանիքէ մը: Այդ տոհմին էր Աբրո, որ հետագային իր անունը պիտի տար իր գերդաստանին: 1644-ին սկսյալ զայն կգտնենք Կրետե, ուր իբրեւ վաճառական կպարենավորեն թուրք բանակը, միասին ունենալով իր եղբայր Պետրոս Չելեբին: Մտերիմն էր եղած ան Դիլի Հուսէին փաշային. այս պատճառով ալ երբ փաշան 1659-ին իբրեւ պետական գանձին անհավատարիմ ամբաստանվեցավ և զլխատվեցավ, իբր մեղսակից մեղադրվեցավ նաեւ Աբրահամ Չելեբին և բանտարկվեցավ: Մեծ զգվարութեամբ էր որ ան կրցավ արդարացնել ինքզինքը և ազատիլ բանտէն: Վերադառնալով Բելգրադ և անպահով զգալով ինքզինքը հոն, ընտանիքով Կոստանդնուպոլիս փոխադրվեցավ: Հոս իր զավակներուն դաստիարակ կարգելով Երեմիա Չելեբին՝ ինքը անցավ Մոսկա, անկե ալ Կրետե, ուր մնաց մինչև 1670, թեև կշարունակեր ճամբորդել հաճախ: Ան հանկարծամահ եղավ 1676 ապրիլ 15-ին:

Աբրո Չելեբի համբավված էր իր բարեսրտութեամբ և ուսմանց հանդէպ իր ունեցած սիրով: Ընթերցանակէ տված է ձեռագիրներ և եկեղեցիներ կառուցած: Իր բարերարութեամբ նորոգված կամ շինված են Պոլսո Ս. Նիկողայոս, Սիլիվրիի Ս. Գևորգ, Գանդիայի Ս. Կարապետ և Ֆիլիպիի Ս. Գևորգ եկեղեցիները: Փորձած է եկեղեցի մը կառուցանել նաեւ Լիվոնոյի մեջ, բայց իրեն զլացված է անհրաժեշտ արտոնութիւնը:

Շնորհիվ իր վաշկած հեղինակութեան տեղական իշխանավորներու մոտ, Աբրո Չելեբի հաճախ միջամտած է անոնց քով ազգային գործերու բարվոք կարգադրութեան համար: Ան հավանաբար կգործեր Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանի խորհուրդներով:

Իր գերդաստանէն նշանավոր հանդիսացան իր եղբայր Պետրոս Չելեբին, ինչպէս հիշեցինք, իր զավակը Մատթեոս Չելեբին, որ

1687-ին աղնվականութեան թուղթ մը ստացավ Լուդովիկոս ԺԴ-էն և որուն երեք որդիները Պետրոս, Աբրահամ և Ստեփանոս 1717 հունվար 28-ին Մեծն Պետրոսէն պիտի ստանային համբավավոր այն հրամանագիրը, որ Տաճկաստանի հայ առևտրականներու առջև կրանար ոռոս պետութեան դռները⁴⁰⁵:

Ժէ դարու նշանավոր հայ շելեբիներն մեկն էր բրուսացի Անտոն Չելեբին, որուն մասին ժամանակակից պատմիչը կգրե. «Քանզի ի ժամանակին՝ յորում ի Կոստանդնուպոլիս էր Տէր Փիլիպպոս կաթողիկոսն, էր և անդ հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անունն էր Անտոն Չալապի...: Եւ էր այրս այս Անտոն Չալապի յոյժ երեւիլ և հոշակեալ այնքան, մինչ զի յայտնի էր ի դուռն թագաւորին օսմանցոյց, նա և ի հեռաւոր աշխարհս ի Յոանկաց, ի Պարսից, զի կարի ընչասէր և փարթամ էր ստացուածովք...»⁴⁰⁶:

Համբավավոր էր նաեւ խոջա Երեմիայի որդի Մաղաքիա Չելեբին, որ 1649 թվականին, շնորհիվ մեծ եպարքոս Մելիք Ահմեդ փաշայի մոտ ունեցած իր ազդեցութեան, կհաջողի նվազեցնել թիավարական տուրքը (բյուրեճի արշեսի), զոր կվճարէին Պոլսո հայ եկեղեցիները: «Մաղաքիա Չէլէպի որդի երեւիլ իշխանին Երեմիայի Համթեցոյ՝ այր պիտանի ի բազում գործս ազգիս Հայոց առ մեծամեծ իշխանաւորս Հագարացոյց, որ ի ժամանակս Մելիկ վէզիրին պակասեցոյց ինքիւրէճի վարձ ի վեց եկեղեցեացն, որոյ վասն՝ Բաշայի լինէր աղմուկ շփոթի յազգս մեր»⁴⁰⁷:

Երեմիա Չելեբի Բալբըրի գերեզմանատունը թաղված հայերուն մեջ կհիշատակեն սույն Մաղաքիա Չելեբին⁴⁰⁸:

Ժէ դարու հայ երեւելիներն մեկն էր Շահին Չելեբին, որուն մասին կհիշատակեն միայն Դավրիժեցիին, թե Պոլսո մեջ կան «նրեւիլ արք որպէս Շահին Չալապի, որ էր այր նշանաւոր ի դրան թագաւորին»⁴⁰⁹, և իր կատարած միջամտութիւնը մեծ վեղիր Բայրամ փաշայի մոտ, որպէսզի Դաւաթիո եկեղեցվո մեջ թաղվի Գրիգոր Կեսարացի պատրիարքը, որ վախճանած էր 1635-ին, ինչպէս կհիշեն Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան⁴¹⁰ և Սարգիս զպիր Սարաֆ-Հովհաննեսյան⁴¹¹:

⁴⁰⁵ Собрание актов..., Москва, 1833, стр. 158—160.

⁴⁰⁶ Առաքիլ Դավրիժեցի, էջ 338—339.

⁴⁰⁷ «Դիվան հայոց պատմութեան», Ժ, էջ 84.

⁴⁰⁸ «Երեմիա Չէլէպիի Ստամպոլոս պատմութիւն», Վիեննա, 1913, էջ 51—52.

⁴⁰⁹ Առաքիլ Դավրիժեցի, էջ 281.

⁴¹⁰ Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան, «Պատմութիւն Ստամպոլոս», Ա, էջ 74.

⁴¹¹ Անդ, էջ 534—535.

⁴⁰⁴ Զ. Ն. Ակինյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան...», Վիեննա, 1933, էջ 239.

Ժէ դարու հայ շէնքերները հիշած ժամանակ շմոռնանք նաև նրեմիա Չելքի Քյոմյուրճյանը: Ոչ առևտրական էր ան, ոչ ալ սեղանավոր, ոչ իսկ հռչակավոր մարդու դավակ: Իր մտավորական բացառիկ ձիրքերն ու անոնց շնորհիվ իր վայելած համբավն էին, որ իրեն շահեցուցեր էին այդ տիտղոսը, զոր, ինչպես պիտի տեսնենք, լիովին արդարացուցան, իր հեղինակությունը արժեքնելով ոչ միայն հայ շրջանակներու մեջ, այլև հայս պետության և Պոլսո օտար գիվանագետներուն:

Հայ շէնքերներ կհիշվին նաև գավառներու մեջ:

Հիշենք նաև, որ այն պատվիրակության մեջ, որ 1724-ին Ղարաբաղի հայության գիրը կտաներ Պետրոս Մեծին, կգտնվեր նաև Քյոյալա Չելքին, «մի անվանի, մի մահթապար մարդ»⁴¹²:

Չելքի տիտղոսը կրողներուն մեջ հայտնի են նաև Տյուզյանները, սկսելով Սարգիս Չելքի Տյուզյանեն: Արդարև, Ժէ դարուն Աննեն Պոլիս եկող զեմքերեն կհիշատակվին նախ այս Սարգիս Չելքի Տյուզյանը, համբավավոր ոսկերիչ, մեռած 1721-ին Պոլսո Գուրուշեմե թաղին մեջ⁴¹³: Տյուզյաններեն շատեր հաջորդ դարերուն ալ պահեցին շէնքերի տիտղոսը: Սարգիսի զավակն էր Հովհաննես Չելքի Տյուզյան, նույնպես պալատական ոսկերիչ, մեռած 1744 մարտ 6-ին: Ասոր ալ զավակն էր Միքայել Չելքի Տյուզյան (1724—1783), իբրև ոսկերչապետ ծառայած չորս սուլթաններու՝ Մահմուտ Ա-ի, Օսման Գ-ի, Համիդ Ա-ի և Մուստաֆա Գ-ի:

Կհաջորդեն Գրիգոր Չելքի Տյուզյան (1774—1819), Սարգիս Չելքի Տյուզյան, ծնած 1777-ին և զխառնված 1819-ին, Միքայել Չելքի Տյուզյան, ծնած 1786-ին և կախված 1819-ին, և Հակոբ Չելքի Տյուզյան (1793—1847): Հակոբ Չելքին հետո, Տյուզյան գերդաստանին պետերը կճանչցվին «բեյ» տիտղոսով, ինչպես Կարապետ բեյ Տյուզյան (1779—1855) և Պողոս բեյ Տյուզյան (1797—1871), որոնցմե հետո այլևս կսկսի շիջիլ իրենց գերդաստանը:

Դեռ լուսարանված չեն պարագաները, որոնց մեջ ի հայտ կուգային հայ շէնքերները: Ոչ ժամանակակից աղբյուրները, ոչ ալ հետագա հետազոտությունները մեզ չեն պարզեր յրիվ, թե ո՞վ և ի՞նչ պայմաններու տակ նման տիտղոս մը կշնորհեր և հայուն: Անպես որ առ այժմ պարզ ենթադրություններ կմնան այդ մասին գրովածները, բացի այն պարագային, թե հայ շէնքերները առհասարակ պետական զանազան ձևերով կանցնէին:

Հայթայիշներ կամ հանձնառուներ էին, և կամ աչքառու սեղանավորներ, որոնք կգործակցեին թուրք մեծ պաշտոնատարներու:

Եթե ոչ ուղղակի թյուրիմացություն, գեթ շափազանցություն պետք է համարել սակայն այն ենթադրությունը, թե խոջաներն ու շէնքերները երկու որոշ դասեր էին Պոլսո մեջ, զորս իրարու հակամարտ կդարձնեին իրենց հակոտնյա շահերը: Ժամանակակից աղբյուրները հեռու են մեզ բերելու այն եզրակացությանց, որոնց կիփորձեն հանգիլ, օրինակ, Անասյան, հանձին խոջաներու և շէնքերներու երկու հակադիր դասեր ենթադրելով⁴¹⁴:

«XVII դարի կեսերում շահերի աններդաշնակությունը աչքի էր ընկնում արևմտահայ բուրժուազիայի այս երկու հատվածների միջև, և նրանք սուր պայքարի մեջ էին իրար հետ, հատկապես 30-ական թվականներից սկսած: Արհեստապետությամբ ու սեղանավորությամբ պինդ կապված օսմանյան արքունիքի և ավատական միջավայրի հետ՝ արևմտահայ բուրժուազիայի շէնքերական հատվածը XII դարում արդեն որոշ չափով ազնվականական նկարագիր էր ընդունել և այլասերվել, քաշվելով դեպի հայկական պահպանողականության հետադիմական դիրքերը: Նա մեծ ազդեցություն ուներ մայրաքաղաքում ու գավառներում, մանավանդ մայրաքաղաքում, որը արևմտահայ հասարակական կյանքի կենտրոնն էր: Չելքիները կազմում էին հայկական արիստոկրատիան, և, հենվելով արքունիքում իրենց ունեցած ազդեցության վրա, նրանք իրենց ձեռքի մեջ էին առել հայ հասարակական կյանքի մեքենայի ղեկավարումը, հոգևոր-մշակութային խնդիրների տնօրինումը, հայ ժողովրդի և օսմանյան պետության հարաբերությունների կարգավորումը, և այլն: Իսկ բուրժուազիայի խոջայական հատվածը, որի ուժն ու ազդեցությունը ավելի մեծ էր գավառում, քան Կ. Պոլսում, մրցակից էր հանդիսանում շէնքերականին, աշխատելով հետզհետե տեղ գրավել ու ամրանալ մայրաքաղաքում, և ձգտելով ներթափանցել արիստոկրատիայի շարքերի մեջ»⁴¹⁵:

Մեր վարժիքով, ուրույն դասեր չէին շէնքերներն ու խոջաները: Չելքիները նախկին խոջաներ էին բոլորն ալ, նախկին վաճառականներ և սեղանավորներ, որոնք որոշ դիրքի հասնելն հետո, կձգտեին ձեռք ձգել շէնքերի տիտղոսն ալ, ավելի տիրական դիրք գրավել պետական գործերու մեջ, և ապահովել անոնց

⁴¹² Ան, «Հայոց պատմություն», Գ, էջ 636:

⁴¹³ Առափնի Քեյսան, «Անի և ակնցի», էջ 164:

⁴¹⁴ Հ. Ս. Անասյան, հիշված աշխատությունը, էջ 59—61:

⁴¹⁵ Անդ, էջ 60—61:

հեղինակություն և դիրք նաև հայ համայնքին ներս:

Այդ կարծիքին կփորձվի պահ մը հարել Անասյան ինքն ալ երբոր կգրե. «Ջեյբքի և խոջա մակդիրների գործածությունը թեև որոշակի կատեգորիաներ էր ցույց տալիս արևմտահայ բուրժուազիայի մեջ, բայց շեյբքիաբյուրը որպես մայրաքաղաքի արխատուկրատիային հատուկ մակդիր, դիրք ու պատիվ, կարծես որոշ գրավություն էր ներկայացնում, և այդ պատճառով խոջաները սիրում էին հաճախ շեյբքի տիտղոսով փառավորվել, իրականում մնալով միշտ նույն վաճառական-խոջաները»⁴¹⁶:

Ավելին ըսենք: Շատերը հայ շեյբքիներն հայ խոջաներու զավակներ էին: Այդպիսիներու բազմիցս կհանդիպինք հիշատակարաններու մեջ: Հարուստ հոր զավակներու կերևաթե ավելի դուրսին կըլլար ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել և արժանանալ «շեյբքի»-ի տիտղոսին և անոր ապահոված դիրքին, ըլլա պետության, ըլլա հայ համայնքին մեջ:

Ամեն պարագայի մեջ, որևէ հիմք չունինք տարբեր դասեր հոշակելու խոջաներն ու շեյբքիները, և զանոնք զետեղելու տարբեր դիրքերու վրա, հայ կյանքը արեւմտեղ իրադարձությանց մեջ: Եվ թյուրիմացության պետք է վերագրել հետևաբար այն ենթադրությունը, թե խոջաներն ու շեյբքիները հակոտնյա կեցվածք ունեցան ինչպես արևմտահայ անջատ կաթողիկոսություն մը ստեղծելու համար տեղի ունեցող փորձերուն, նույնպես հայ աղատագրության անունով փորձված ձեռնարկներուն մեջ:

13. ՊՈԼՍՈ ՀԱՅ ՄԱՀՏԵՍԻՆԵՐԸ

Ջեյբքիներն ու խոջաները չէին միայն, որ իրենց ձեռքն ունեին ազդին ղեկը Պոլսո մեջ: Երևելիներու երրորդ դաս մըն ալ կար, որ ծանոթ էր մահտեսի անունով: Դժբախտաբար անոնք ուշադրություն չեն գրաված ցարդ, թեև «մահտեսի» տիտղոսով անձեր բազմիցս հիշատակված ըլլան հին աղբյուրներու մեջ: Թերևս անոր համար կարծված է, թե «մահտեսի» մակդիրը անոնք կրած են Երուսաղեմ ուխտի գացած ըլլալուն համար:

Արդարև, «մահտեսի» մակդիրը առհասարակ կտրվի անոնց, որոնք ուխտի գացած են Երուսաղեմ:

Դժբախտաբար ձեռքիս տակ չունիմ Հյունքյարայեյնտյանը, տեսնելու համար, թե ինչպե՞ս կստուգարանն ան մահտեսի բառը: Հյունքյարայեյնտյանները սակայն պակաս չեն բաժնին մեկնություններ տալու համար

բառերուն, եկեղեցին ստուգարանելով եկեղեցի (այսինքն հոն եկուր, որ բաղձանքդ կատարվի), կանթեղը՝ կա-անդ-եղ (այսինքն աման մը ուր յուր կա), զոմէշը՝ զոմ-էշ (այսինքն զոմի էշ) և այլն: Մահտեսին մեկնարանողներ եղան իբր մահ-տեսի (այսինքն Երուսաղեմ ուխտի երթալ գալու համար նեղություններ հանձն առի, գրեթե մահը տեսալ):

Անհրաժեշտ կդառնա ճշտել, թե «մահտեսի», «մուղտեսի» կամ «մղտեսի» մակդիրը, զոր քրիստոնյա ուխտավորները կուտային իրենց իրենց և որ պարզապես արաբերեն մուղտեսի կամ մուկաղղեսի բառն է, միշտ չէ որ Երուսաղեմին վերադարձողներուն կտրվի:

«Մահտեսի»-ին հոմանիշ էր «հաջի»-ն:

«Հաջիությունը», — կգրե Անասյան, — պատվավոր մակդիր էր, որը կրում էին մահմեդականների մոտ՝ դեպի Մեկկա ուխտի գնացած մարդիկ, իսկ քրիստոնյաների մոտ՝ դեպի Երուսաղեմ: Հաջի-ն արաբերեն բառ է (حاجی), որ նշանակում է «ուխտավոր»: Հայերի մոտ նվազ գործածական էր հաջի բառը: Նրանց մոտ ավելի էր ընդհանրացած նույն իմաստով գործածել մուղտեսի, մղտեսի կամ մահտեսի, որ նույնպես գալիս էր արաբերենից՝ մուկղիսի (مقلسى), որը ծագում է կուղս (قلس) «Երուսաղեմ» բառից»⁴¹⁷:

Այստեղ ևս անհրաժեշտ կդառնա ճշտել, թե «հաջի» մակդիրը այն ձևով որ կգրվեր արաբերենի մեջ (حاجی), Մեքքեի ուխտավորութենեն դարձող մուսուլմաններուն համար, նույն այդ ուղղագրությամբ չէր որ կգործածվեր քրիստոնյա ուխտավորներու պարագային. այս վերջիններուն համար կգրվեր (هاجی) ձևով, թեև միշտ «հաջի» կկարդացվեր:

Հաճախ քրիստոնյաներու համար նույն մակդիրը կդառնար պարզապես «աջի» (أجى), որ պարզապես «դառն» կնշանակե և որ հետևաբար վիրավորական բնույթ ունի: Հայտնի թրքագետներ Bianchi և Kieffler կգրեն իրենց թուրք-ֆրանսերեն բառարանին մեջ (Paris, I, 1850, p. 26), թե «ուխտավոր» (pelerin) բառը, employé quelquefois avec cette orthographe par les musulmans, par dérision, pour les pélerins chrétiens de Jérusalem.

«Մահտեսի» տիտղոսին գործածությունը ժէ և ժԸ դարերու աղբյուրներուն մեջ մեղ կմղե այն եզրակացության, թե ան կտրվի որոշ դասի մը, որ դիրք ունի ազդին մեջ և կզբաղի ազդին գործերով ալ:

⁴¹⁶ Հ. Ս. Անասյան, հիշված աշխատությունը, էջ 67:

⁴¹⁷ Անդ, էջ 109:

Բարգեն կաթողիկոս ևս կընդունի, թե «մահտեսի»-ն, իր սովորական նշանակութեանն զատ, որոշ դասու մը տշված մակդիրն է, որ հետագային պիտի փոխարինվի «ամիրա» տիտղոսով⁴¹⁸:

Այսպես, Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ 1627-ի նորոգութեան սատարողներուն մէջ 11 խոջաներու կողքին հիշատակված են մահտեսի Կարապետն և մահտեսի Աղազարն, ակնցի մահտեսի Քուլաֆն, բակլաճի մահտեսի Ղազարն: Եվ հատկանշական է, որ հիշված 11 խոջաներուն ոչ մէկը «մահտեսի տիտղոս ևս չի կրեր»⁴¹⁹:

Ավելի հետո, 1715-ին, Պոլսո հայ երեւիներուն մէջ, որոնք աջակցեցան Հովհաննէս Կոլոտի պատրիարք անվանման, կհիշվին մահտեսի Հարություն: Մուրադյան և մահտեսի Հարություն: Բնվեքեյան, երկուքն ալ ապուլեխցի, կեսարացի մահտեսի: Սարգիս, կոստանդնուպոլսեցի մահտեսի: Իսրայել, մահտեսի Լուսֆի, Երևանեց մահտեսի Սեդրեստոս և ուրիշներ⁴²⁰:

Մայր Եկեղեցւոյ վերաշինութեան աջակցողներուն մէջ կհիշվին 1719-ին մահտեսի Սեդրոս, մահտեսի Մելիտոն Արաբ-օղլու և Սարգիս խալֆան⁴²¹:

14. ՊՈԼՍՈ ՀԱՅ ԷՍՆԱՖԸ

Չեյքիններու, խոջաներու և մահտեսիներու կողքին, ավելի համեստ դաս մըն ալ կար Պոլսո մէջ: Այն դարուն, որով այս գլուխը կզարդի, դեռ նկատելի չէր անոնց դիրքն ու դերը մայրաքաղաքին մէջ. հաջորդ դարուն էր, որ անոնք իրենց դերը զգալի պիտի ընէին, ավելի շնորհալի կերպով մաս առնելով Պոլսո ազգային գործերուն մէջ. իսկ անցյալ դարու առաջին կիսուն արդեն պայքարի պիտի անցնէին բուն երեւելիներուն դեմ, անկե խելու համար ազգին ղեկը:

«Էսնաֆ»-ները, այսինքն արհեստավորները, կկազմէին այդ դասը:

Հայ աղբյուրները դժբախտաբար ժլատ են իրենց տված լուրերուն մէջ հայոց կիրարկած արհեստներուն մասին այդ դարուն, և պետք է մեծ համբերութիւն ունենալ քանի մը նոթքաղելու համար անոնցմէ: Ըստ հայ աղբյուրներու, Պոլսո մէջ հացագործութիւնը կերկի թն ամենեւն նախընտրած արհեստն էր հայոց ժէ դարուն, և «հացածախներու վարպետ»-

ները գրեթե հայեր էին բոլորն ալ, ինչպես կընշէ Սրեմիա Չեյքի. «Վարպետն հացածախից ի Հայոց ազգէս ամենայն»⁴²²:

Հայ հացագործները պետք է նշանավոր եղած ըլլան նույնիսկ Ֆաթիհի դարեն: Այդ դարեն կհիշվի Անդրեաս հայ հացագործը, որուն անունով Ղալաթի կողմը նույնիսկ փողոց մը կար՝ էրմենի էքմեքլի Անդրեաս մահալլեսի⁴²³:

Այդ դարուն հավանաբար հայ կառուցողներ ալ կային Պոլսո մէջ, ինչպես և որմնադիրներ, հյուաններ և ատաղձագործներ, որոնք այնքան հռչակ պիտի հանէին հետագա դարերուն օսմանյան մայրաքաղաքին մէջ: Նույնպես խալֆաները, որոնք Պոլիսը պիտի ողողէին հետագային և զայն պիտի պնէին շքեղ շէնքերով, այդ դարուն ալ անշուշտ կային: Երեմիա Չեյքիին տեղ մը կհիշէ.

«Աստ մամեք խոնայֆ գալֆայֆ գարդարեն իւրեանց գերեզման»⁴²⁴:

Ըստ հայ աղբյուրներու, հայ մուշտակագործներ ալ պետք է որ եղած ըլլան Պոլսո մէջ: Երեմիա Չեյքիի կհիշէ նաև ապուխտ և երշիկ շինող հայեր⁴²⁵:

«Սովորք են առնել ապուխտ

լէգիկ է սունուլսն հայկական»⁴²⁶:

Հարյուրավոր այն ազգանունները, զորս ժամանակին փորձութիւնն ունեցած է ժողովուրդ այս տողերը գրողը, մեծ մասամբ կմատնանշեն արհեստը զայն կրողներու ծնողքին կամ նախահայրերուն: Գուլումճյաններու, Զեհարճյաններու, Գազանճյաններու, Գազալյաններու, Պեղալյաններու, Գալաֆյաններու, Զիլճյաններու, Ինճիճյաններու, Կյումյուլճյաններու, Մխարյաններու և նման հարյուրավոր մականուններու տերերը անշուշտ որ կսերին ծնողներե, որոնք կիրարկած են անոնց մէջ ցույց տրված արհեստները: Եվ անտեղի չէ ենթադրել, որ այդ արհեստներով, գոնե անոնց մեկ կարևոր մասով, պետք է պարապած ըլլան հայերը մեր նշույթը կազմող դարուն ալ:

Այն 24 տեղակայներու կարգին, օրինակ, որոնք պահ մը Պոլսո Աթոռին դէկն ունեցան իրենց ձեռքը ժէ դարուն, իրենց արհեստներովը կհիշվին խաճճի Սեֆեր, Էֆենֆէի Բեկլեր, Բերեստեհի Գրիգոր, յաղնի Հարություն, աւայիճի Շահրի⁴²⁶:

⁴²² Երեմիա Չեյքիի Քյումյուրճյան, «Պատմութիւն Ստամբուլոյ», էջ 37:

⁴²³ Mimar Ali Sa'im Ülgen, "Fatih devrinde İstanbul", Ankara, 1939, s. 41.

⁴²⁴ Երեմիա Չեյքիի, անդ, էջ 52:

⁴²⁵ Անդ, էջ 66:

⁴²⁶ Հրանտ Ասատուր, հիշված աշխատութիւնը, էջ 101:

⁴¹⁸ Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան, «Կոլոտ Հովհաննէս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 7:

⁴¹⁹ Միլոն Ասատուր, «Երեքդարյան պատմութիւն Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ», էջ 57:

⁴²⁰ Հրանտ Ասատուր, «Կ. Պոլսո հայերն ու իրենց պատրիարքները», էջ 127:

⁴²¹ Անդ, էջ 129:

Պոլսո մեջ կային հայ բռնաբերողներ և, որոնք կրնակեին Թուրքիայի թաղը և առհասարակ մաղաղորդ էին:

«Ներքին և արտաքին դրանք բնակիչն բոլորը Հայկական»:

Արք ի տուն գնալու գործին և կանայքն ի ծախել շուրջ գան»⁴²⁷:

Նույն այդ Թուրքիայի թաղին մեջ կրնան կեցողներ և կրողներ հայեր ալ:

«Աստ գաթըրնի հայք բնակիչն փրանիք բեռնաբարձական»⁴²⁸:

Հաջորդ դարուն արդեն ավելի լրիվ կղառնան հայ աղբյուրներու տված ժանտեղծությունները Պոլսո հայ արհեստավորներուն մասին: Այսպես, էսնաֆներու շարքին մեջ, որոնք 1761 թվականին 6-ին մաս առին ընտրողական ժողովին, որ Գրիգոր վարդապետ Պասմաճյանը նրուստի մի պատրիարք ընտրեց, իրենց արհեստներով կհիշվին սոֆլի հաջի Սինան, ֆերեստեի հաջի Սարգիս, ոսկերիչ ուստա Գրիգոր, իվեֆչի ուստա Ավետիս, դափամաշի ուստա Բաղդասար, ջևանիչի տիրացու Նդիսե, պոզմաշի ուստա Հարություն, գիլփոշի խոջա Արսեն, քերզի Մանվել, դազազ ուստա էմիրզե, սմաֆե Մկրտիչ, սահաթի Բարթոլոմեոս, համամշի բաշի Սարգիս, թիզմեշի ուստա Մարութ, բեզազ Թուսաս»⁴²⁹:

Թուրք նշանավոր ուղեգիր էվլիա Չելեբի, որ իր ուղեգրության առաջին հատորը առավելապես նվիրած է Ժէ դարու Պոլսո կյանքին, բարեբախտաբար քանի մը տեղեկություններ ինքն ալ կուտա հայ արհեստավորներու մասին, նկարագրելու առթիվ էսնաֆներու թափորը, որ տողանցք ըրավ սուլթան Մուրադի առջևին:

Այսպես, տողանցք կատարող արհեստավորներու կարգին ան կհիշե կղմինդրագործները (քիրմիտչի), որոնք հայեր են և որոնք կանցնին ցեխոտ դեմքերով, քար կրող վեց հարյուրի շափ հայ իշապաններ (էշեքչի), որոնք հայերեն երգեր մուտավոր կանցնին, հայ բռնաբերողներ (բաղանաշի), որոնք կտողանցեն կոնակնին կուծերով և ձեռքերին ձողեր ու վրձիններ բռնած, միշտ հայերեն երգելով իրենց անցքի միջոցին⁴³⁰:

Էվլիա կհիշե նույնպես հայ կոյուղի մաքրողներ և ակնահատներ (լաղմիչ), որոնք կանցնին իրենց գործիքներով, երկար ու սև մուճակներ հագած, և հայերեն բացականչու-

թյուններ արձակելով, «աղտոտ դաս մը, որուն շնորհիվ է սակայն որ Պոլիս մաքուր կմնա»⁴³¹: Ըստ էվլիա Չելեբի, մեծ մասամբ կեսարացի հայեր են նաև Պոլսո այն ակահատները, զորս թուրք բանակը կգործածե բերդերու գրավման ատեն պարիսպներուն տակը փորելով և վառող զետեղելով հոն, դանոնք պայթեցնելու համար⁴³²:

Թուրք ուղեգիրը հույն և հայ արհեստավորներ կհիշե իրեն փորագրիչ (ֆալեմֆյար), որոնք զմայլելի սավաքներ և կիտվածներ կտրինեն և որոնք մեջ անվանի են Սիմիթչի-օղլու Միխայիլ հույնը, ինչպես և խաչատուր հայր Ունքափանի մեջ, և Այդըն անուն ուրիշ հայ մը Բեզեսթանի մոտ⁴³³:

Էվլիա Չելեբի հատուկ հատված մը կնվիրե ձեռնածուներու (շուքեղեբաղ) և ծաղրածուներու (մուզնիֆե) դասուն, որոնք կայսերական հարսնիքներու (սուր-ու-հյումայուն), հաղթանակի տոնախմբությանց (ֆեթհ շադյումաճըղը) և երեկոններու զավակներու թլփատությանց տոներուն (խրթաճ) առթիվ հանդիսականները կզվարճացնեն, և որոնց կրնկերանան երգիչներ (մուղրիբ), պարողներ (բաֆֆաս), դափ դարնողներ (դայիթե գեման), միմոսներ, (մուկալիդ), և այլն: Աստի, ըստ էվլիայի, 12 ճյուղերու կբաժնվին, որոնցմե երեքին մեջ հայեր ալ կան, ինչպես և հույներ, հրեաներ ու զնչուներ⁴³⁴:

Ամեն էսնաֆ իր պետը ուներ: Արհեստակցական միություններ չէին անշուշտ էսնաֆները բառին ներկա իմաստով: Բայց կգտնվին ղեկավարությանը տակ պետի մը, որ պետությունեն և կճանչցվեր իրեն այդպիսին և որ, հաճախ, գլխավոր հայթայթիչն ու արհեստագետն էր օրվան այս կամ այն իշխանավորին:

Խոջա Ռուհիջան, օրինակ, ֆյուրֆչի-բաշին էր մեծ եպարքոսին⁴³⁵, և առավելապես իր այս հանգամանքին կպարտի իր վայելած հեղինակությունը ազգային գործերու մեջ ալ:

Իրո հացագործներու պետ կհիշվի Ամբակում Ակնցին, որ Ժէ դարու հայ երեկոններեն մեկն էր և մորեղբայրը Երեմիա Չելեբի: «Սա,— կգրե Երեմիա իր Տարեգրության մեջ,— ի ժամանակի Ճէլալոց հարք իրով գալ յայս աշխարհ (Կ. Պոլիս), մտեալ ի հացագործութիւն պետ լինէր նոցա և երեկո ի քաղաքի»⁴³⁶:

427 Երեմիա Չելեպի, անդ, էջ 45:

428 Անդ:

429 Հ. Գրիգորիս Գալեմֆյարյան, «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու», Վիեննա, 1915, էջ 335—338:

430 «Էվլիա Չելեբի սեյահաթնամեսի», Ա, 1314 (1898), էջ 629—630:

431 Անդ, էջ 632:

432 Անդ, էջ 515—516:

433 Անդ, էջ 575—576:

434 Անդ, էջ 645—648:

435 Առաֆն Դավրիճեցի, էջ 242:

436 Դոկտ. Վ. Բորգումյան, «Երեմիա Չելեպի Քէօ-միւրճեան, Ստամպուլոյ պատմութիւն», Ա, էջ 145:

Եվ սակայն ժամանակակից հիշատակարաններու մեջ մենք չենք տեսներ ժողովրդական խավերու հարազատ դեմքը՝ իրենց բարքերուն և սովորութիւնն, իրենց առօրյա հուզումներուն և մտահոգութիւնն, իրենց ձգտումներուն մեջ: Զանազան խլրտումները, զորս զանգվածները ցույց տված են Պոլսո տեղական պայքարներուն մեջ, բավական չեն բացատրելու անոնց իսկական դիմագիծը: Եվ սակայն անոնք ունեցած են իրենց ուրույն դիմագծութիւնը, իրենց դերն իսկ Պոլսո հայ գաղութին մեջ՝ ի հեճուկս մեծ անուններուն, շեկերի թե խոջա, որոնք իրենց աղմուկով կ'եցնեն հիշատակարանները, և որոնք իրենք զիրենք շփոթեցնել կուտան Պոլսո հայ գաղութին հետ: Ընդհատ է, այդ շողջողուն անուններն ալ որոշ դեր են կատարած գաղութի կյանքին մեջ և իրենց ազդեցութեան տակ են պահած Պատրիարքարանն ու եկեղեցիները: Բայց անոնք դեռ բուն գաղութը չեն, համաստայն զանգվածը, որ ապրած է հաճախ մութին մեջ, բայց բուն թթխմորն է հայ կյանքին: Ան է, որ դիմացուցած է հայ ընտանիքը առանին իր կենցաղով ու սովորութիւններով, պահպանած է հայ ավանդութիւնները թուրք բարքերու օվկիանոսին մեջ, հայ սրբութիւնները պաշտպանած է լեվանտեաններու խայծերուն դեմ: Այդ զանգվածը հեռու է պահված հաճախ ազգին գործերէն, բայց ան է պահպանած ազգը: Ան է, որ վառ պահած է հայ օջախը սուլթաններու մայրաքաղաքին մեջ, և հին օրերու հայ բարբառը բերած հասցուցած է մեզի: Ղրիմի հայ բարբառը, որուն հետքերը դեռ կ'ընկնին մեր օրերուն Պոլսո կարգ մը թաղերուն մեջ, ան է որ բերած է մեզի, ի հեճուկս ծիծաղելի այն հայերէնին, որուն վրա կ'գուրգուրային տիրացուները, գրաբարի տեղ զննելով զայն:

Էսնաֆը, Պոլսո մեջ, իսկական հայ համայնքն էր:

15. ՀՈՍԱՆՔՆԵՐ ՊՈԼՍՈ ՄԵԶ

(Թլրլանք, Արեւելիք, Զառուկյանք, Հոռմցիք)

Հոսանքներ կային Պոլսո ժողովրդական խավերուն մեջ ալ: Անոնցմէ քիչերուն մասին միայն լուր ունինք: Պոլսո հայ գաղութը կազմող վեց հասարակութիւններուն մեջ նման խմբակներ պետք է որ եղած ըլլային, որովհետեւ գաղութը միշտ ներսէն ալեկոծութեան մեջ էր Պատրիարքական Աթոռին համար մղված պայքարներուն պատճառով, իսկ այդ պայքարները պետք է կողմեր ստեղծած ըլլային ժողովրդական խավերու մեջ ևս: Բնական է ենթադրել, որ ամեն մրցակից կշանար համախոհներու խումբ մը կ'ունակն ունենալ

պայքարի անցնելն առաջ: Կուսակիցներու խմբակներ իրենց շուրջ կ'փորձէին ստեղծել անշուշտ օրվան երեւելիներն ալ, անոնց աշակցութեամբը ձեռք առնելու համար ազգային գործերու ղեկը: Եվ վերջապէս մրցողի խմբակներ կ'ազմվէին նաեւ եկեղեցիներու շուրջ առաջնապէս տեղական վեճերու հետեւանքով, որոնք երբեմն դուրս կ'ընկնին իրենց հունեն ու կվարակնին ամբողջ գաղութը:

Թլրլյանք մեկն էին այն խմբակներէն, որոնք Պոլսո հայ կյանքը խռովեցին ժէ դարուն, գործոն դեր կատարելով Պատրիարքական Աթոռին շուրջ մղված զգվելի պայքարներուն մեջ: Անոնց պետն էր Աստվածատուր երեց վանեցին, «Թլրլն կոչեցնալ, այսինքն թոթովախօս»:

Այս խմբակն էր որ բուն պայքարի մը սկսավ Ռուսիային, ինչպէս նաեւ թովմայի պատուհասը նախաձեռնող ութը աշխարհական տեղակալներուն դեմ, կրցավ մեծ եպարքոսը սիրաշահիլ և անոր կոթնած, հալածել և ձերբակալել տալ տեղակալներն ու անոնց համախոհները, «Եւ յայնմհետէ իւրեանց գործ ասացնալ զայս ի գիշերի եւ ի տունջեան ի նոյն լինէին հետամուտ՝ ո՛չ այնչափ վասն զարեանն թովմայի խնդրելով զվրէժ, որչափ վասն շահու անձանց՝ ևս և վասն կորստեան և մահու տեղակալացն»⁴³⁷:

Թլրլյաններն էին դարձլալ, որ տեսակ-տեսակ սագրանքներով խանգարեցին Եղիազար Այնթապցիի ձեռնարկները ի նպաստ Ս. Հակոբի վերադարձման⁴³⁸:

Թլրլյանները դարձլալ պիտի աշխուժանային քանի մը տարի հետո, 1663-ին, երբ էջմիածնէն նվիրակ եկաւ Հովհաննէս Թուփունչին:

Նույն այդ տարին Թլրլյանները աշակեցեցան Մարտիրոս Ղրիմեցիի՝ Եղիազար Այնթապցիի դեմ անոր պայքարին մեջ, և աշխատեցան «զի Աստուածատուր հաստատեարի ի պատրիարքութեան Երոստղէմի, և ինքն Մարտիրոս ի փոխանորդութեան նորին. և առ հաստատութիւն այսր առեալ Մարտիրոսին դէ իսր զԹլրլեանս և զնմանիս նոցա՝ եւ և զնաց յԱրքիանուպոլիս, ուր եկեալ էր եպարքոսն հանդերձ բանակաւ՝ դարձ արարեալ ի պատերազմէ մաճառաց»⁴³⁹:

Թլրլյանները չզգաստացան այնուհետեւ ալ: Անոնք կողորհն եղան Հակոբ Գ Զոլայեցիի կաթողիկոսին, որ 1666-ին Պոլիս էր եկեր Եղիազարի սարքած կաթողիկոսութեան վերջ տալու և իր իրաւաստութիւնը ամրացնելու Թուրքիո սահմաններու հայութեան վրա:

⁴³⁷ Զամլանք, Գ, էջ 677.

⁴³⁸ Անդ, էջ 681.

⁴³⁹ Անդ, էջ 703.

Թլթլյանները աշխուժացած կզտնենք տարիներ հետո, 1675-ին ալ:

Պոլսո հայ երեւելիները, տաղտկացած Թլթլյաններու խառնակչութիւնն, կխուսափին անոնցմէ և կնախընտրեն գործ չունենալ անոնց հետ:

Թլթլյաններու շահատակութիւնները խամբեցան տակալ: Իսրոյն վերջերը անոնք արդեն չկային:

Նույն դարուն մեջ ստեղծված քաղաքական պայմանները և Հայ Եկեղեցւոյ անցուցած տալանապը հայ ժողովուրդը կվերածեն տարբեր ճակատներու:

Նոր օրերու մեջ արեւմտահայ և արեւելահայ անուններով ճանչցված այլ հատվածները տալանապի դարուն ալ կային, բայց տարբեր անվանակոչումներով: Արեւմտահայ հատվածը «Հոռոմցիներ» կկոչվէր այդ դարուն և կրաղկանար Թուրքիո սահմաններուն մեջ ապրող հայերէն:

Խոսելով այն պայքարներուն մասին, որոնք մղվեցան Նդիաղարի փորձերուն ժամանակ Թուրքիո մեջ ուրույն կաթողիկոսութիւն հաստատելու, Օրմանյան հետեւյալ կերպով կընորոշէ Հոռոմցիները. «Մակայն Նդիաղարն ալ յուր պաշտպաններն ունէր, և այս խումբը կկազմէին ընդհանրապէս Հոռոմցիներ, անուն մը որ ոչ Հոռոմի և ոչ հոռոմներու հետ առնչութիւն ունէր, այլ յուր ծագումը կառնէր Առաջակողման Ասիայի կամ Անադոլիի Հոռոմաստան կոչվելէն. և այս անունն ալ գործածական եղած էր Սելջուկյան թագավորութեան՝ Ռումի սուլթանութիւն կոչված ըլլալէն: Այս խումբը կկազմէր ընդհանրապէս հինն և Կ. Պոլիս հաստատված կամ մերձավորագոյն գաղաղներէն մայրաքաղաք փոխադրվող հայերէն»⁴⁴⁰:

Հայութեան մյուս հատվածը Արեւելցիներն էին, զորս Զահուկյաններ ևս կկոչնէր ժամանակակից աղբյուրները: Պետք է ըսել, որ Արեւելի հայերը դիրք ու հեղինակութիւն ունէին այն դարուն նաեւ հայրենիքէն դուրս: Կրպիկ հիշել, որ հայ կորիզները, որոնք կազմէին Արեւմուտքի մեջ և սկսեցին էին զարկ տալ հայ առևտուրին Եւրոպայի իսկ ծոցին մեջ և մյուս կողմէն բքիջներ կստեղծէին հայ ժողովուրդի մտավոր վեհերէն համար, առավելապէս կպարտին Արեւելյան Հայաստանէն մեկնող տարրերուն: Անոնք կայր հաստատած էին նաեւ Պոլիս, ուր հեղինակութիւն ստեղծած էին իրենց համար և դեր կկատարէին հայ կյանքի մեջ ալ:

Դավրիժեցի, խոսելով Պոլսո ժողովուրդին կողմէն Գրիգոր Կեսարացի պատրիարքին մոտ եղած դիմումներու մասին որպէսզի վարդապետութիւն շնորհէր Մովսէս Տաթևացիի, որ անոր իսկ ձեռնասունն էր, կգրէ, թէ «ամենաշահալիկ ժողովուրդքն Կոստանդնուպոլսի, եկեղեցականք և աշխարհականք, և երեւելի արքա՝ որպէս Շահին շալապին, որ էր այլ նշանաւոր ի դրան թագաւորին, և այլ ևս յոլովք: Նաեւ վաճառականք արեւելեան աշխարհին, որք պատահեցան ի Կոստանդնուպոլիս, և մանաւանդ ջողայեցիք և գողթնեցիք. զի գիտէին, թէ Մովսէսն յարեւելեան աշխարհէն է. ամենեքեան մատուցեալ առ Գրիգոր վարդապետն խնդրէին տալ Տէր Մովսէսի վարդապետութիւն»⁴⁴¹:

Պոլսո հայ կյանքը արեւելիցիներէն մեջ պոլիս հաստատված Արեւելցիները կկարծվի, թէ իրենց կողմն ունենին նաեւ Թուրքիո հայկական նահանգներէն Պոլիս գաղթած հայերը, հավանաբար այն պատճառով, որ անոնք սիրալիկ վերաբերմունք չէին գտած մայրաքաղաքի հայ բնիկներէն:

Արեւելցիները կհինուին հավանորեն ժողովրդական այն գանդվածներուն վրա, որոնք ջալալիներու ապստամբութեան ժամանակներէն ի վեր ապավինած էին Թուրքիո ծովեզերյա քաղաքները, հանդիպելով գաղութահայ ազգակիցներու և մասնավորապէս պոլսահայ բնիկներու անբարյացակամութեանը: «Քանզի այս արեւելյան հայքն որ տեղացւոյն, բազում աւեր և խառնակութիւն եղև ի մէջ քաղաքիս և բոլոր Հոռոմցտանն», — կգրէ 1656-ին Երեմիա Զեւերի⁴⁴²:

Հոռոմցիներու և Արեւելցիներու պայքարը առավելապէս զգալի եղավ Նդիաղար Այնթապի փորձերուն առթիւ: Եւ կընանք նույնիսկ ըսել, թէ Նդիաղարն էր, որ երկուքի բաժնեց Պոլիսը Թուրքիո մեջ առանձին կաթողիկոսութիւն մը հաստատելու ձեռնարկած ժամանակ: Այս ձեռնարկը, որ կփորձէր Մայր Աթոռին հեղինակութենէն անջատել Թուրքիո հայութիւնը և որուն մասին դեռ պիտի խոսինք, չէր կրնար ընդլզում հառաջ չբերել ինչպէս Թուրքիո զանազան շրջաններու հայութեան, նույնպէս և Պոլսո մեջ: Կուսակիցներու կողքին, զորս Նդիաղար հաջողած էր շահիլ, ստովար մաս մը կար հայութեան մեջ, որ դեմ էր այդ ծրագրին, և որուն կորիզը բնականաբար Արեւելցիներն էին:

«Արեւելցիների ետև կանգնած էին, — կգրէ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան, — Իրանում և Թուրքիայի ժովափնյա քաղաքներում առևտրով զբաղված «եկվորները», գլուխ ունենալով Միրզա և Խոսրով «երեւելի և մեծա-

441 Առաքել Դավրիժեցի, էջ 287:

442 Երեմիա Զեւերի, «Օրագրութիւն», Երուսաղեմ, 1939, էջ 155:

440 «Ազգապատում», Բ, էջ 2559:

նուն» սեղանավորներին, Հակոբ Կաթողիկոսի վարկատուններին»⁴⁴³:

16. ՎԵՃԵՐ ՎԵՑ ԶԵՄԱԱԹՆԵՐՈՒ ԾՈՑԻՆ ՄԵՋ

Կախալին բոլոր անոնք, որ կկարծեն, թե նույն այս դարուն Պոլսո մեջ կազմակերպված խավեր կամ դասեր կային, որոնք պայքարի մեջ էին անընդհատ մեկը մյուսին դեմ:

Ճիշտ է, խուլ պայքար մը միշտ ալ կար խավե խավ ու դասն դաս: Երբ զիրար կխաշաձեն մարդոց շահերը, չեն կրնար անոնք իրարու հետ հաշտ ապրիլ: Հաշտ չէին Պոլսո հայ հոսանքները հանրային կյանքի մեջ ալ: Բայց իրենց հակամարտությունը հայ կյանքին ներս կրխիս առավելապես իրենց ղեկավարներու անձնական հաշիվներեն, որոնց կողքին նվազ դեր չէին կատարեր նաև անոնց փառասիրությունը, նախասիրություններն ու քմահաճույքը: Ամեն մեկ չեխերի, ամեն մեկ խոջա իր մանկավիճիկներու խումբը ուներ, ինչպես պիտի ունենային դար մը հետո՝ հայ ամիրաները, ինչպես որ, մեր օրերուն, պիտի ունենար հայ աղան: Մանկավիճիկներու խումբը, որ կըրջապատեր օրվան երեկին, օրվան հոսանքն էր:

Պոլսո հայ կյանքին մեջ իրարու դեմ մրցող այդ հոսանքները իրենց թատր ունեին օսմանյան մայրաքաղաքին մեջ գոյություն ունեցող ջեմաաթները, ուրիշ խոսքով՝ անոնց կոնիվը կմովեր հայ եկեղեցիներու շրջապատին մեջ: Դեռ շրջան մըն էր, երբ Հայ Եկեղեցվո բակին դուռն չէր ելլեր հայ կյանքը:

Այդ պատճառով է, որ այս կամ այն երևելին, որ հայ կյանքի մեջ դեր կուզեր խաղալ կամ իր ազդեցության տակ պահել Պատրիարքարանը, իրեն կուլան կըներ ջեմաաթներն մեկը կամ մյուսը, ինչպես նաև այն հոգևորականները, որոնք կցանկային Պատրիարքական Աթոռին, կփորձեին նախ սիրաշահիլ ջեմաաթները, և անոնց կոթնած իր Աթոռեն քշել օրվան պատրիարքը:

Ջեմաաթները, որոնք կազմված էին հայ եկեղեցիներու շուրջ և որոնց ղեկավարները հայ կյանքը կվարեին Ժէ դարուն, ինչպես ըսած ենք, վեց էին թիվով: Այդ վեց եկեղեցիներն էին Գուլքափուի Ս. Աստվածածինը, Մամաթիո Ս. Գևորգը, Պալաթի Ս. Հրեշտակապետը, Ղալաթիո Ս. Լուսավորիչը, Հիսար-դիրի Ս. Նիկողայոսը և Ջինիլի համամի Ս. Սարգիսը, և հետևաբար նույն այդ եկեղեցիներու շուրջ կազմված հայ համայնքներն էին, որ կներկայացնեին վեց ջեմաաթները:

Վեց ջեմաաթները, իրականին մեջ, Պոլսո հայությունը կներկայացնեին: Անոնց կամ-

քովն էր, որ պատրիարքները կուզային Աթոռ, կամ կըջվեին Աթոռեն: Անոնք էին, որ արձագանք կուտային հայ խավերու ձգտումներուն և դժգոհության, և կվարեին առհասարակ հայ կյանքը հանձին իրենց «իշխան»-ներուն: Նույն այս իշխաններն էին, որ իրենց թաթին տակ կպահեին օրվան պատրիարքը, և Պատրիարքարանը կվարեին երբոր թափուր ըլլար Աթոռը:

«Յայսմաուրք»-ի մը մեջ, զոր 1879-ին Սրվանձոյանց տեսած է Խարբերդի Ավշան գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հետևյալ հիշատակարանը կա. «Գրեցաւ ի Բիւզանդիա ի մահալլէն Սուլու Մանաստրու ի թուականութեան Հայոց ՌՂԴ (=1645) ի թագաւորութեան Սուլթան Իպրահիմին և ի պատրիարքութեան վեց եկեղեցեաց իշխանաց»⁴⁴⁴:

Վեց ջեմաաթները միշտ չէ որ, սակայն, համերաշխ էին: Ազգային զանազան հարցեր զանոնք կգտնեին տարբեր ճակատներու վրա, նայած թե դեպի ուր հակած էին իրենց իշխանները իրենց անձնական նկատումներով և տրամադրություններով: Անոնց հակամարտությունը երևան կուգար զխալոթարար պատրիարքներու ընտրության ժամանակ, որովհետև տարբեր թեկնածուներ կպաշտպանեին. հաճախ ջեմաաթները, ավելի ճիշտ՝ իրենց պատրիարքըուն կունենային անոնց իշխանները: Ջեմաաթներու հակամարտությունը կպոռթկար նաև Պատրիարքարանին մեջ տիրող վեճերու առթիվ:

Վեց ջեմաաթներու պայքարը աշխուժացած կթվի ըլլալ աշխարհական տեղակալներու օրով ալ, որոնք միահեծան տիրան էին դարձած ազգային գործերուն, նախ 1649-են 1650, Դավիթ Արեւելցիի երկրորդ պատրիարքութենէն հետո, և ապա, 1657-են 1659, Թովմա Բերիացիի կողմէ Պատրիարքական Աթոռը հափշտակելու համար եղած փորձերուն ժամանակ:

Ջեմաաթները հետագային ալ տարակարծություններ ունեցան իրենց միջև:

Ավելցնենք, որ նույն այդ վեց ջեմաաթներն էին, որ Պոլսո հայ զաղուրթ պիտի ներկայացնեին դար մը հետո ալ, և անոնց անունով պիտի տնօրինվեին ազգային գործերը:

Վեց ջեմաաթները ավելի բան երեք դար իրենց մեջ խտացուցին այսպես Պոլսո հայ կյանքը, և անոնց կոթնած, Պոլսո հայ երևելիները իրենց ձեռքը խաղալիք ըրին ազգին գործերը:

Պետք է դեռ շատ ժամանակ անցնենք, որպեսզի զանգվածները ևս դեր ստանձնեն հայ կյանքին մեջ:

⁴⁴³ Ա. Հովհաննիսյան, «Գրվադներ հայ զառադրական մարի պատմության», Բ, էջ 150—151:

⁴⁴⁴ Գաբրիել Եպիսկոպոս Սրվանձալանց, «Թորոս աղբար», Բ, 1884, էջ 356:

17. ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ՊՈԼՍՈՒ ԴԻՐՔԸ

Ժէ դարու երկրորդ կեսը կսկծալի նոր շրջան մը կբանա հայ ժողովուրդի պատմութիւնը պրպտողին առջև: Հանդիսատես կըլլա ան գուպարի մը, զոր կմղեն բարձրաստիճան երեք հոգեւորականները՝ Սարտիրոս Կաֆայեցին, Խաչատուր Գաղատացին և Նղիազար Այնթապցին, Պոլսո, Երուսաղեմի և Սոս Աթոռները խոռովութեանց բույն դարձնելով ամբողջ երկու տասնամյակ:

Պայքարը, զոր մղեցին Նղիազար Այնթապցի և Մարտիրոս Կաֆայեցի, Երուսաղեմի Աթոռին հետ կապված էր առավելապես, բայց ան իր կրքի ալիքները կբերեր մինչև Պոլիս, ուր երկու ոսոխները հաճախ կուգային հայ շրջանակներու մեջ համախոհներ կորգելու և պետական շրջանակներու պաշտպանութիւնը իր ապահովելու համար: Նղիազար իր աղմուկոտ գործունեութիւնը սկսեր էր Երուսաղեմի Աթոռին քնելու համար Աստվածատուր Տարոնեցին, և քանիցս ընդհատեր էր անոր պատրիարքութիւնը և ձեռք ձգեր Աթոռը, զոր կուգեր կուլան դարձնել Թուրքիո հայոց կաթողիկոս դառնալու իր հաւակնութեան: Իր այս քայլերուն ժամանակ Նղիազար իր դեմը գտավ հանկարծ Մարտիրոս Կաֆայեցին, որուն հետ նախապես բարեկամներ էին և զոր վշտացուցեր էր՝ Պոլսո պատրիարքութեան տիրանալու փորձերուն մեջ օգնած չըլլալուն համար անոր: Մարտիրոս, որ ատեն մը հեռացած էր Պոլսն և Կաֆա, իր ծննդավայրը քաշված, 1665-ին հանկարծ հայտնվեցավ կրկին Պոլսո մեջ, և, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին հրահանգված, սկսավ պայքարիլ Նղիազարի դեմ, ձախողութեան մատնելու համար անոր փորձերը Թուրքիո հայոց կաթողիկոս դառնալու: Մարտիրոս «անձամբ թաղե թաղ և եկեղեցի եկեղեցի կվազեր, ամեն տեղ Նղիազարի գործերը կպախարակեր, և ձեռնարկը դատապարտող քարոզներ կխոսեր»⁴⁴⁵, մյուս կողմն դավեր կնյութեր պետութեան իշխանավորներուն մոտ, որպեսզի տապալե Նղիազարը:

Այդ բոլորը ուժ չունեցան սակայն Նղիազարը ձախողեցնելու, և ան հաջողեցավ վաւերացվիլ և օծվիլ իբրև Թուրքիո հայոց կաթողիկոս, որուն Աթոռը Երուսաղեմը պիտի ըլլար: Պայքարը Երուսաղեմ փոխադրվեցավ այս կերպով, և ավելի սրվեցավ, Մարտիրոս հաջողած ըլլալով Երուսաղեմի պատրիարք անվանվիլ և երեք տարի (1677—1680) իր վրա պահել Աթոռը, սակայն Երուսաղեմ չմնալով միշտ, որովհետև ան ձիւրեն համար նորահնար դիրք մը չինած էր, Երուսաղեմի

Պատրիարքութեան անուշով և Պոլիս կմնար, և կգոհանար հանուն Երուսաղեմի հավաքված նվերներով, և ուխտի դարբաններով»⁴⁴⁶:

Ամբողջ տարիներ մղված զգվելի կռիւն մը հետո, Այնթապցին պիտի հաշտվեր իր մյուս ոսոխին՝ Խաչատուր Գաղատացիին հետ ալ: Բացառիկ երևույթ չէ աս Հայ Եկեղեցւո պատմութեան մեջ: Հաճախ է պատահեր, որ երկու նախկին թշնամիներ հանկարծ գործակիցներու վերածվին, և փոխարենը, երբեմն համախոհներու միջև զօտութիւն ծայր տա և անոնք կատաղի հակառակորդներ դառնան իրարու: Այնպես որ անսովոր դեպք մը չէր որ տեղի կունենար, երբ այս հին ոսոխները հանկարծ ձեռք կկարկառեին իրարու, խորհրդավոր հանդիպումի մը մեջ փոխադարձ հասկացողութեան գալով:

Վեճեր կան դեռ մինչև այսօր այս փոխադարձ հասկացողութեան իսկական բնույթը ճշտելու հարցին շուրջ: Ինչ որ անվիճելի է, անոնց իրավախոհութիւնն է Թուրքիո սահմաններուն մեջ երկու կաթողիկոսութիւն ունենալու մասին, մեկը Սիսի Աթոռը իր նախկին սահմաններով և իրավասութիւններով, և մյուսը նոր կաթողիկոսութիւնը, որ Երուսաղեմի վանքը իրեն Աթոռ պիտի ունենար և իր իրավասութիւնները պիտի տարածեր Կիլիկիո շրջանն զուրս Թուրքիո բոլոր հայերուն վրա:

Չննք դիտեր որքան անկեղծ էր Խաչատուր Գաղատացին իր նախկին ոսոխին հետ հաշտված ժամանակ, և ինչ նկատումներ ի մտի ունենր՝ Նղիազարը Թուրքիո հայոց կաթողիկոս ճանչնալու համար: Ստույգ է սակայն, որ նույն այս Խաչատուր Գաղատացին, «խորհրդավոր դաշինքը» կնքել հետո իր վաղեմի հակառակորդին հետ, մյուս կողմն փորձեր կրներ չբեղանալու Պոլսո առջև, որ կերէի թե գայթակղած էր, հանձին «երեւելի հայոց» և «զգոնամիտ անձանց», Ղազարի փորձերն՝ Թուրքիո հայոց կաթողիկոս դառնալու: Արդարեւ, մինչ Նղիազար կգրե Խաչատուրի, որ Պոլիս էր գացած խորհրդավոր համաձայնութենէն հետո, թե «ժամ է կատարելոյ զբան մեր՝ զոր հաստատեցաք ի միասին յԵրուսաղեմ», Խաչատուր, «ընթերցեալ զայս գիր՝ պատրաստեցաւ յուղի անկանելութեան զգուշացեալ՝ զի մի ի գործել նորա գայսպիսի ինչ չտապալ»՝ ծագեցի աղմուկ շփոթից, և ինքն ի պատճառս այլոց ի բերան անկցի ամենեցուն, կոչեաց ի ծածուկ զոմանս յերեւելեացն Հայոց և ի զգոնամիտ անձանց [Կ. Պոլսոյ], ընդ որս էր և Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանց. և խորհուրդ արար ընդ նոսա վասն իրացս այսոցիկ: Իսկ նոքա իբրև լուսն, ապշեցան և զահի հարան, յայտնի տեսանե-

445 «Ազգապատում», Բ, էջ 2559:

446 Անդ, էջ 2590:

լով՝ թէ ո՛րպիսի պառակտումն հանդերձեալ է լինել ի մէջ ազգին, և պատառումն անկարկատելի. մանաւանդ զի գիտէին՝ թէ հաւան է բովանդակ ազգն ընդ Յակոբ կաթողիկոս էջմիածնի, և սիրով կապեալ ընդ նմա վասն բարեւարկեան նորա. և չէ ուրուք գտեալ ի նմա արատս ինչ. վասն որոյ բազում աղաչանօք հաւանեցուցին զհաշատուր մի՝ վաղվադել. զի թերևս գտցեն հնարս ինչ. և մեք ասեն առաքեմք զոր յառաջագոյն քան զքեզ՝ երթալ և խօսել ի դիմաց մեզ ընդ Եղիազարու, զի դադարեցցի յայնպիսի խորհրդոց»⁴⁴⁷:

Արդարև, Պոլսո երևելիները Եղիազարի կղերկեն Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանը, «վասն լինելոյ նորա յաջողակ ի գիր և ի բան», «զի թերևս կարասցէ նա իմաստութեամբ իւրով փոխել զմիտս նոցա»:

«Հասեալ Երեմիա ի Բերիա՝ յանդիման եղև Եղիազարու, և խօսեցաւ ընդ նմա բազում ինչ ի բազում ատուրս. այլ ինչ ոչ օգտեցաւ. քանզի ասէր Եղիազար. իմ առեալ է արքունի հրովարտակ յեպարքոսէ վասն կաթողիկոսութեան, ապա զի՝ ևս ընդունայն աշխատիք նանրացուցանել զայն. և սկսաւ առաջի դնել նոցա՝ թէ ի նստել իմում յԱթոռ Հայրապետութեան՝ ակն ունիմ բազում օգուտ ցուցանել և առնել ազգիս Հայոց՝ շինութեամբք և կարգաւորութեամբք, և շառնուլ բնաւ նուէրս ի ժողովրդենէ, և այլն: Եւ Երեմիա Չէլէպի անյոյս լեալ ի փոխելոյ զմիտս նորա՝ ծանոյց գրով ի Կոստանդնուպոլիս»⁴⁴⁸:

Խաշատուրին ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթե երթալ Բերիա և կաթողիկոս օծել Եղիազարը, որ «գրեաց յայնժամ թուղթ օրհնութեան առ ամենայն հայս եղեալս ընդ տէրութեամբ օսմանցոց, և յայտ արարեալ նոցա զիշխանութիւն իւր՝ զոր ընկալաւ թագա-

ւորական հրովարտակաւ, յոգորեաց զամենեւին կալ սիրով ընդ իւր՝ խոստացեալ նոցա առնել բազում բարիս, և ըստ ժամանակին առաքել ի ձեռն նուիրակաց զՄիւսոնն ձրի՝ առանց իրիք նուիրաց և տրոց. և ինքն ելեալ գնաց յԵրուսաղէմ»⁴⁴⁹:

Վէճի նյութ է այն պարագան, թե երկու հոգևոր պետերեն որո՞ւնն էր նախաձեռնությունը «գաղտնի դաշինք»-ին և թե ի՞նչ նպատակ կհետապնդէր ան: Մինչ Չամշյանի ի ձեռն ունեցած աղբյուրին մեջ Եղիազարն է, որ իր հավակնությանց գործիք կդարձնէ հաշատուր Գաղատացին, որ իբրև թե «էր պարզամիտ ոք», կարծողներ կան, որ, ընդհակառակը, հաշատուրն էր, որ հաջողած էր Եղիազարը իրեն որսալ՝ զայն լծելով իր ծրագիրներուն, Թուրքիո հայոց կաթողիկոսությունը անոր շնորհելու գնով⁴⁵⁰:

«Թուրքիո հայոց կաթողիկոսությունը» բերա՞ւ որևէ բարիք հայ ժողովուրդին: Բոլոր անոնք, որ զբաղած են Հայ Եկեղեցւոյ պատմությամբ և անոր առնչությամբը հայ ժողովուրդի անցուցած տագնապներուն հետ, դառնությամբ է որ կարձանագրեն Եղիազարի նախաձեռնությամբ փորձված այդ պառակտումը Հայ Եկեղեցւոյ ծոցին մեջ, որ հայ ժողովուրդը ևս պիտի ձեղքեր երկուքի:

Արևմտահայ կաթողիկոսությունը, որուն համար այնքան ճիգ ու ավշուն վատնեց Եղիազար, որ հայ կյանքը ալիկոծեց քանի մը տասնյակ տարի, հայ ժողովուրդին որևէ օգուտ չբերաւ և չէր ալ կրնար բերել: Անոր դրական գնահատական տալու փորձերը, որոնք ներկայիս տեղի կունենան, ի վիճակի չեն, գոնե առձեռն փաստերու ուժով, այդ բանը ժխտել:

(Շառունգեկի)

⁴⁴⁷ Չամշյան, Գ, էջ 699:

⁴⁴⁸ Անդ, էջ 700:

⁴⁴⁹ Անդ:

⁴⁵⁰ Հ. Ս. Անասյան, հիշված աշխատությունը, էջ 250: